կոպոսն եղաւ, 1680ին օրինակած է ի Բաղէշ Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին Ճառերն եւ ուրիշ երեւելի մատեաններ, ինչպէս կը վկայէ Կ. Պոլսեցի Տէր Անտոն Վ. Պաղտասարեան բնակեալ Վիեննայի Ս. Ղազարու վանքը Հայ կրօնաւորաց քով: Ասի Նախապէս Վարդան Վ. Ոսնանեանի աշակերտը ըլլալով՝ կը պատմէ թէ իր ուսուցչին մահէն ետքը՝ յաջորդ Յովհաննէս Տօպլիա Ակկուստոնովիչ արքեպիսկոպոսը ժառանգեց անոր բոլոր օրինակած մատեանները, որոնց մէջ կային Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին Ճառերը եւ Յովհաննէս Ն. Պատրիարքին պատմագրութիւնը Հայոց ազգին վրայ: Ուստի Պաղտասարեան երբ յիշատակ իր ուսուցչին կը խնդրէ Յովհաննէս Տօպիայէն վերոյիշեալ երկու մատեանները, եւ նա ալ կը շնորհէ անոր պայմանաւ որ իր Նախորդին հոգւոյն համար պատարագ մատուցանէ: Ժամանակ մ'ետքը՝ երբ Պաղտասարեան կ'ուզէ Վիեննայի Մխիթարեանց անդամակցիլ, յիշեալ երկու մատեաններն անոնց կը նուիրէ:

Բարեյիշատակ Մխիթար Աբբան երբ 1718ին իր Նորակազմ Միաբանութեան գործոց համար Հռոմ կ'երթայ, հոն շատերէն կը յորդորուի որ Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին Ճառերը օրինակել տալով Ս. Քահանայապետին նուիրէ, եւ նա ալ գրելով իր քարտուղարին բերել կու տայ հաւատարիմ օրինակ մը փառազարդ կազմով եւ կ'ընծայէ զայն Կղեմէս ԺԱ Ս. Քահանայապետին, որմէ շատ գոհ կը մնայ, եւ Վատիկանու գրատան մէջ զգուշութեամբ պահել կը հրամայէ: Սակայն Նորին Սրբութիւնը գիտնալ բաղձալով այս Նորագիւտ մատեանին բովանդակութիւնը՝ կը հրամայէ Կարդինալ Անթոնէլլի Պրոպագանդայի վերակացուին որ լատիներէն թարգմանել տայ զայն: Պրոպագանդան այս թարգմանութեան գործը կը ղրկէ ի Վիեննաիկ իր հայագէտ աշակերտին Խաչատուր Վ. Առաքել.ին, որ թէեւ այն ատեն տեղւոյն Ս. Խաչ ազգային եկեղեցւոյ ժողովրդապետութեան հոգէն զատ՝ ունէր նաեւ Ս. Թովմաս Ագուինացւոյ աստուածաբանութեան համառօտութիւնն ոտանաւորի վերածելու զբաղումը, հանդերձ այսու զանց ընելով զայն՝ յիշեալ թարգմանութիւնը կը կատարէ: Դիտելի է սակայն որ այս Ճառերուն հին հայերէն լեզուն կը բովանդակէ հոյլ մը խրթին եւ անծանօթ բարդութիւններ, որպիսի է "Ծմրնպարձ„, զոր եւ ոչ քաջ հայկաբաններ կարող են թեթեւս իմանալ, որով Խաչատուր.Վ. չէր կարող կատարել այս թարգմանութիւնն առանց օգնականի: Ուստի նախ կը ղրկէ զայն Աստուածատուրեան Տէր Ստեփան Վ.ին, դասատու հայերէն լեզուի Պրոպագանդայի դպրոցին, որ լաւ մ'աչքէ անցընելէ ետքը՝ կը յանձնէ Կարդինալ Անթոնէլլիին, եւ նա ալ կը մատուցանէ Ս. Քահանայապետին:

Այս թարգմանութիւնը տպագրուեցաւ ի Հռոմ 1756ին հայերէնով միասին ՝երկսիւն 39×26, որուն մէջ կը յիշուի Նաեւ Կեննատիոսի հայերէն օրինակ մ'ալ, որմէ կը պակսին Ժ, ԺԲ, ԺԳ, ԺԴ, ԺԸ գլուխները, եւ վերնագրոց մէջ սակաւ ինչ տարբերութիւնք կ'երեւին: Լատիներէն թարգմանութիւնն երբեք կարեւորութիւն չունի, մեզի համար, Նկատառութեան արժանի եթէ կէտ մը կայ, այն է՝ որ յիշեալ Ճառերը սխալմամբ Ս. Յակոբ Զգօն Մծբնայ Հայրապետին ընծայուած են. իրապէս Հրահատ Զգօն Պարսկին են (ՀԱ. 1905 Հոկտ., էջ 297) ուրիշ անուամբ Ափրաատէս, Եպիսկոպոս Մար Մաթթայի, Մուսուլի մօտ. Պատ. Եկեղ. Funk, Թարգմ. գաղղ. Hemmer Հտ. Ա. էջ 323:

Հ. ԻՍԱՀԱԿ Վ. ՏԻՐԱՑԵԱՆ
Միաբան Անտոնեան:

# ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

## ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ

(Շարունակութիւն:)

### 8

4. Հայ. աւիթ (եզ. սեռ. աւթի) 'պատաճառ', բառը, ինչպէս արդէն Spr. Abh. հատ. 2. ըսած եմ = աւ (նախդիր)+իթ, *էթ-ի տեղ, հնդեւր. *ei-ti 'երթալը, գնալը, առ հնդեւր. արմ. *ei, *oi: *i, *y-ā 'երթալ,' Հայ.-ը *աւէթ (եզ. սեռ. *աւիթի)-ի տեղ աւիթ (աւթի) ունենալով, այս օրինակը ցոյց կու տայ, որ եզ. անուղղ. հոլովներուն արմատաձեւն եզ. ուղղ.-ի մէջ մտնելով, յետոյ նորոգուած եզ. սեռ. հոլով մը կրնայ կազմել առանց ի արմատական ձայնի հին հնոյ, ջիր ջրի, ծու ծոյ, մէջ մջոյ եւայլն ձեւերուն ազդեցութեան տակ, իսկ հայ. մխիթ-ար բառի մէջ, ուր *մխէթ ըստ Pedersenի (KZ. 39, 401 = ՀԱ. 1906 ա. 20, 22a, § 38) *mukh- ei-ti-էն է, արինաւոր ի ձայն մը ունինք, որ առանց -ար = հնդեւր. ā-ro-s վերջաւորութեան նոյնպէս *մխէթ (եզ. սեռ. *մխիթի) կու տար ձայնական օրէնքներու համեմատ եւ ան ատենը աւիթ (աւթի) ձեւերուն *մխիթ (*մխթի) ձեւեր կը համեմատէին, բայց այսպէս միայն մխիթար ձեւ մ'ունինք, բնու. այս բառին ի ձայնը պատճառ

digitised by A.R.A.R.@

է՝ ըստ իս, որ առին՝ եւ ոչ *առէն ձեւին կը հանդիպինք։

Ուրիշ հայ. բառ մը, ուր մէջ ՀԱ.-ի մէջ հնդեւր. *oi- 'երթալ, ձեւը ճնշուեր են, այր (եղ. սեռ. այրի) 'փապար ի մէջ լերանց, է = հնդեւր. *oiri-s (եղ. սեռ. *oirios)։

Եթէ հիմայ մաճ. լեզուի բառերը նայինք, հոն ալ կը գտնենք այն ձեւերը, որոնք այս հնդեւր. *ei, *oi, *i եւ y-ā 'երթալ, արմատին կը պատկանին։ Հնդեւր. *ei- ունինք մաճ. ej-t 'facio cadere,-ին մէջ (-t պատճառականով) եւ նոյն արմատը կը ցուցնէ esső 'pluvia, *ejsö-էն (եւ ան տեսնէք esö 'pluvia, եւ esni 'cadere, ալ es-ը *ess-էն ունին, առաջ *essni-ի տեղ es-ni, յետոյ essö-ի քով esö ալ es-ni-էն)։ Հնդեւր. *oi-ով են մաճ. aja-k 'labium, եւ aj-t-ó 'janua,։ Հնդեւր. *i-ով են մաճ. i-n 'nervus, i-na-s 'cursor, եւ 'nervosus, i n-dít 'moveo, i-n-dúl 'moveor, i-n go-k 'moveor, i-n-t 'moneo, i-r-t 'exstirpare, i-r-galom 'misericordia,։ Հնդեւր. *y-ā-ով են մաճ. já-r 'eo, եւ já-t-ék 'ludus, já-t-szom 'ludo,։ Հիմայ չեմ տարակուսիր, որ մաճ. óvc-m 'caveo, tueor, նոյնպէս öv 'cingulum, zona, ալ հնդեւր. *ov- 'զգենուլ,-ի հետ մի եւ նոյն արմատ կը կազմեն, իսկ մաճ. alko-tó 'opifex, alko-tmány 'structura, aedificium, բառերուն *alko-ը հայ. *ալքո- (հմմտ. 'ջիլոտ եւ լեանէմ) = հնդեւր. *ā-li-q̑ʷo 'թողուլ,-էն բաղադրեալ է, ըստ իս։ Մաճ. ár 'subula (հերիւն),-ը, իբր հնդեւր. բառ, հնդեւր. *ar- 'միաւորել,-ին կը պատկանի, որ *arն ալ, ինչպէս տեսած ենք, լատ. arāre եւ orior-ի հետ ալ միեւնոյն նախաբառ մը կը կազմէ։ Մաճ. ára-d 'exundo, ալ այս հնդեւր. *ar-էն է ā-ով առ հնդեւր. e/ŏr, հմմտ. սկր. árṇas չէզ. ծփեալ հոսանք։ Հնդեւր. ei-ով է լատ. eo (*ey-ō), īre (*ī-si) 'երթալ, ոսկ. amfr-et 'ambiunt, պէլ. eite = լատ. īte, ումբ. ampr-etu, -ehtu 'ambito, enetu հրամ. 'inito, etu 'ito, eest, est 'ibit, (*ei-seti կամ *eyeseti) լատ. ī-tāre (յաճախական fréquentativ, մաճ. gyakoriló)-ի հետ, որ = իրեր. ethaim 'կ'երթամ, յուն. ἰτητέον, ἰτητικός, հմմտ. ումբ. etatu, etato 'itate, itatote, (*ei-tā). — Սկր. éti (imás, yánti) ավ. aeiti, հպարս. aitiy 'կ'երթայ, յուն. εἶσι նոյնը, (εἶμι, ἴμεν, ἴᾱσι) լիթ. eĩt(i) նոյնը, (eimì, einù = լատ. īt նոյնը, գոթ. iddja 'ging, ագս. eode նոյնը,; եկսլ. idą, iti 'երթալ, իրեր. etha 'itum est, aith-ct 'evadunt, կըմր. wyf = εἶμι; երկայն *ē-ով նորավ. äiti (*ēiti) 'կ'երթայ,։ Հմմտ. դեռ յուն. εἰσίθμη 'մուտք, οἶμος 'ճանապարհ, շաւիղ, գնացք, ուղի, սկր. éma-s (*oi-mo-s) 'գնացք,' Արմատաձեւ i-ն ընդարձակեալ ā-ով (y-ā) ունինք լատ. jā-nua 'դուռն,-ի մէջ, սկր. yā-ti 'կ'երթայ, լիթ. jóti 'հեծնել, եկսլ. jaxati նոյնը,։ Հմմտ. դեռ circum-itus եւայլն յուն. ἁμαξ-ιτός¹ այսինքն ὁδός)

'փոխանցութեան կարգերով գնացեալ, սկր. dur-ita (*dus-ito), ավ. duž-ita 'դժուար մատչելի, լատ. exitium, initium, սկր. ityā (հնդեւր. *ityā) իգ. 'գնացք, (Walde, Lat. Etym. 194 հետեւ.)։ Լատ. iter, itineris 'գնացք, ուղի, հին ր,ն արմ. է, ուր *itinis iter-ին ազդեցութեան տակ եղաւ itin-er-is։ Լատ. it-er-ի մէջ i-t 'գնացող, բայական անուն է առ. eo (*ey-ō = **éy-oa) 'երթալ, հմմտ. com-it comes-ի մէջ (Walde, էջ 310)։

Սկր. éva ար. (*ói-vo-s) 'գնացք, վաղելը, ընթացք, առարկայապէս ալ ըստ Meringerի IF 18, 295 („zu Ehe, Eid, Eidam“) հրգ. ēwa 'օրէնք, ամուսնութիւն,-ի հետ կապ ունի (հմմտ. հայ. չորքոտիլ 'ամուսնանալ, առ. չորք), իսկ հրգ. ēwa եւ լատ. aequus միայն ձայնապէս կարելի է։ Նրգ. Eid 'երդումն, ալ = յուն. οἶτος տ. Osthoff BB. 24, 209, բայց ըստ Meringerի՝ կարելի է, որ οἶτος հակառակ Osthoffի՝ εἶμι 'երթալ,-ին կը պատկանի, որ կործիքին ես ալ համաձայն եմ։ A. Noreen, Spridda Studier (1895) էջ 76, ինչպէս H. Schuchard Meringerին ուշադրութիւնն այս տեղւոյ վրայ դարձուցեր է, edgång-ի վրայ խօսելով, կ'ըսէ, որ ed-ը սկզբնաբար 'գնացք,-ը նշանակած է (հմմտ. շէդ. ed 'նեղ գնացք 'ի մէջ երկու ջրոց, Lilla Edet եւ այլն), յետոյ 'երդում,-ը (Eid), որ գնացեալ էր (gegangen), այսինքն միայն տօնական գնացքէն յետոյ տաճարին առջեւ վկաներէն եւ ուրիշ երդումն ընողներէն խօսեալ էր, հմմտ. դեռ Tamm, Etym. svensk ordbog, էջ 119։ Նրգ. Eid leisten ալ 'զերդումը երթալ, (leisten սկզբնաբար = 'gehen, տ. Kluge Deutsch. Etym.⁶ բառերին տակ), իսկ Նրգ. Eidam 'Eid (երդում)-ով կապեալ, է։²

Մաճ. es-kü 'երդումն, ալ ըստ իս՝ es 'իյնալ,-ին կը պատկանի, որուն նախաձեւը *ej s. էր առ հնդեւր. *ei 'երթալ,։

5. Հայ. վարեմ 'մշակել զերկիր, սերմանել, հերկել, ըծել, տանել, գնալ (ճանապարհ), աճել, ձգել, ի գործ ածել, վար (եղ. սեռ. վարոյ) 'վարելի գետին, ըստ իս *վar-e-mi 'ես կը գործեմ գետինը, *վaros 'երկրագործութիւն, են։ Նոյն արմատը J. Scheftelowitz BB. 29, 42 համեմատեր է յուն. ἐρύω 'ձգել, քաշել, (Leo Meyer, Handbuch 1, 451), լիթ. varaũ, varýti 'ածել գերամակ (das

¹ ἅμαξα առաջ 'Einachser, (մի առանցքով կառք մը՝ ըստ Meringerի (Zeitschrift für die österreichischen Gymnasien 1908 տե. էջ 387), յետոյ 'չորս առանցքով կառք, մ՝ալ։ Նոյնպէս τράπεζα 'չորս ոտքով բան մը, դ. օ. սեղան, ակառ.), յետոյ մէկ ոտքով ալ։ Նրգ. Eim er ալ հիմայ 'աման մը առանց ականջի, որովհետեւ Biereimer (գարեջրով աման)-ի վրայ կը մտածենք, որ ականջ չունի, բայց ըստ առաջ բաց փայտեայ աման մը մէկ ականջով (Henkel) կը նշանակէր (հրգ. eimbar), ինչպէս ամանք հիմայ ալ շատ տարածուած է (տ. Meringer IF 18, 206, ուր գիտականը բ. ծանօթութեան մէջ համառական մտածութիւն մը կը յայտնէ, „Ob nicht, կ'ըսէ Gustav Meyerին արժանի յաջորդը հնդեւր. համեմատական լեզուաբանութեան աթոռին վրայ Graz-ի համալսարանին, ἀμφορεύς (vgl. lat. amphora), ἀμφορεύς ursprünglich (aus *hamphorā) das einhenklige Gefäss bedeutete, wie ἀμφιφορεύς das zweihenklige?“

² (Ուրիշ կերպով ըստ Meringerի ծանօթութեան՝ Eid-ի վրայ Brugmann Kurze vgl. Gr. էջ 146, որ αἶνος կը համեմատէ եւ ուրիշ կերպով Eidam-ի վրայ Wiedemann BB. 27, 212)։

digitised by A.R.A.R.@

Vieh treiben), բառերուն հետ. Wenn richtig, կ'ըսէ Meringer IF 18, 252, so haben wir eine Entwicklung 'treiben, ziehen, ackern (ածել, ձգել, գործել զերկիր),։ Այս վերջին համեմատութեան միայն սկզբնատառ հնդեւր. ս ձայնին հայ.-ի մէջն ալ վ-ով ըլլալը առանձին արգելք է, որ հնդեւր. *s-ին հայ.-ի մէջ միայն հ իրեն շարունակութիւն է (հմմտ. գ. օ. հայ. գինի, լատ. vinum), վ-ի վրայ ա. վեց = ըստ իս ՀԱ. *վ-eks, ուր *eks-ը *seks-էն է։

6. Հայ. քոյր (բ-արմ. եղ. սեռ. քեռ) = սկր. svásar, զդ. $x^v$anhar, նպարս. $x^v$āhar, լատ. soror, գոթ. svistar, լիտ. sesũ, եկղ. sestra, հիբեր. siur, fiur։ Հայ. քոյր = հնդեւր. եզ. ուղղ. *své-sōr, եզ. սեռ. հայ. քեռ = հնդեւր. svesrós (Hübschm. 1, 504)։ Հնդեւր. *svésōr-էն՝ ըստ իս, առաջ *svésur, *hvéhur, *vhéhur, *ghéur, *khéur, *k'óur եղաւ, որմէ վերջապէս քոյր։

(Շարունակելի։) ՂՈՒԿԱՍ ԲԱԳՐՈՒՊԱՆԵԱՆ

# ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

## ՄԵԾՆ ՏՐԴԱՏ

(Շարունակութիւն եւ վերջ)

Խորենացու Բ գրքի վերջին ՂԲ գլուխը նուիրած է «Վախճանի Տրդատայ թագաւորին, ընդ որում եւ ողբերգական մեղադրութիւն»։ Ափսոս, որ մեր հեղինակը չէ հաղորդում Հայոց թագաւորի սպանութեան իսկական դէպքը. նա գոհ է մնում ընդհանուր խորհրդածութիւններով մեր ազգի «բարձրայօնութեան, անօրէնութեան եւ ամբարշտութեան» մասին, որով նա նահատակեց իր թագաւորներից լաւագոյնին։ Որա հետ միասին իր նիւթին յարմարեցնում է բառեր եւ դարձուածքներ աւետարանիչներից, առաքեալներից, Դաւթի սաղմոսներից, փոխ առնելով առանձին բառեր եւ ասացուածքներ նաեւ Փիլոնից,[1] Կեղծ-Կալիսթենէսից,[2] Գր. Նազիանզացուց[3], Ագաթանգեղոսից (էջ 631) եւ ուրիշներից։ Ընդհանրապէս, մեր պատմագրի, ըստ երեւոյթին, նպատակն է պատմել Տրդատի մասին մի այնպիսի բան, որ անծանօթ լինի Ագաթանգեղոսին եւ միւս հայ պատմիչներին, այն է — Տրդատի սպանութիւնը թոյնով։ Շատ կարելի է, որ այդպիսի աւանդութիւն գոյութիւն ունէր ժողովրդի մէջ Խորենացու ժամանակ եւ պատմիչն այսպիսով հանդէս է գալիս իբրեւ նրա արտայայտիչը։

Ինչ վերաբերում է ծանօթ նկարագրին «Տրդատի մահուան եւ թաղման մասին», որ գտնւում է՝ «Յայսմաւուրքների» մէջ եւ որը Հ. Ալիշան եւ ուրիշներ համարում են իբրեւ թէ մեր ձեռքը չհասած Դ. գրքի[1] մի հատուած կամ որ նոյն է՝ Խորենացու պատմութեան մի «յաւելուած», — ես վերագրում եմ այն յետին ժամանակի անվաւեր գրուածքների թւին, որոնք կազմուել են նոյն Խորենացու ազդեցութեամբ։

Այս անվաւեր գրուածքում Հայոց թագաւորի սպանութեան փաստին քաղաքական բնաւորութիւն է տրուած. եղեռնագործութեան գլխաւոր յանցաւորն է Հայոց Տրդատ թագաւորի ոխերիմ թշնամի Պարսից թագաւոր Շապուհը, որ օգտւում էր այս նպատակի համար այն «չար հայ մարդկանց գործակցութեամբ, որոնք ցանկանում էին հեթանոսութիւնը վերականգնել իրենց հայրենիքում»։ Նրանց մէջ աչքի են ընկնում մանաւանդ Սիւնեաց իշխանները, որոնց կալուածները սահմանակից էին Պարսկաստանին։ Դաւադիրների թւումն էր նաեւ թագաւորի սենեկապանը։ Տրդատ՝ զգալով դաւադրութեան գոյութիւնը, ուղեւորուեց առ ժամանակ իր պետութեան արեւմտեան կողմերը — Եկեղեաց գաւառը։ Այնտեղ Սիւնեաց իշխաններից ոմանք, որոնք մասնակցում էին դաւադրութեանը, որսի ժամանակ իբր թէ պատահմամբ, նետ արձակեցին թագաւորի վրայ նրան սպանելու դիտաւորութեամբ։ Թագաւորը վիրաւորուած է. նրան տանում են արքունիք եւ անկողին դնում։ Սենեկապանը տեսնելով, որ թագաւորի վէրքը վտանգաւոր չէ, նրան թոյն է տալիս, որից նա մեռնում է։ Սրանից յետոյ անվաւեր գրութիւնը տալիս է Տրդատ թագաւորի փառաւոր թաղման նկարագիրը Թորդանում, փոխ առած համարեա բառացի Խորենացու պատմածից Հայոց Ար-

---

[1] «Վասն Եսսեանց», էջ 24. հայ թարգմ. (Վենետ. 1892)։

[2] «Աղեքսանդրի պատմութիւն», էջ 41 հայ թարգմ.։

[3] «Բան առ Կեսարն». «Որդիք մարդկան, մինչեւ ցե՞րբ էք ծանրասիրտք... ընդէ՞ր սիրէք զնանրութիւն եւ խնդրէք զստութիւն»։ Վիեն. Մխ. ձեռ. թ. 217, էջ 120a. «Առ որս». «Եւ պատշաճ համարիմ զամենայն հրապարակն շուրջանակի հնչեցուցանել այնպիսի բանիւք զամենայն զինարբուս զկծեցուցանել շատախօսութեամբ եւ աղճատանօք»։ Վիեն. Մխ. ձեռ. թ. 96 էջ 7b եւ 157։ «Ի ժողովողն». «Ո՞ր օգուտ է բազում բանիցն, ուր շատախօսութեամբն հոսանք իբրեւ յաղբերէ դիմեն յանօգտութենէն»։ Վիեն. Մխիթարեանց ձեռ. թ. 217. էջ 245a։

[1] Տես «Բազմավէպ», 1851 թ. էջ 69—75. Նաեւ Ամիլեան «Արարատ», 1890։ Համեմ. բաց ի սրանից, Langlois, Collection I եւ II. Brosset նոյն տեղ. Զարբանալեան Մ. ա. հրտ. Բ. Վիեն. 1886, էջ 355—356։

digitised by A.R.A.R.@